

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒԵՋ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
СПИТАКСКИЙ  
ГОСУДАРСТВЕННЫЙ КОЛЛЕДЖ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,  
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА  
REPUBLIC OF ARMENIA  
SPITAK STATE COLLEGE  
THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE,  
CULTURE AND SPORT

377410, ԶԶ,ք. Սպիտակ, Ավետիսյան 273 Զեռ/ Тел./Tel.(0-255)2-37-11  
Спитак, Аветисян 273 , 377410 RA , Spitak, Avetisian 273  
E-mail: spitakipetakcollege@rambler.ru

Բ-198, 25.08.2021թ



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՏԵՂԱԿԱԼ ՏԻԿԻՆ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Ղեկավարվելով « Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, ինչպես նաև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման ու անցկացման կարգով՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ «Սպիտակի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա է մի քանի մոդուլների գծով դասախոսների թափուր տեղ:

Ներկայացնում եմ Սպիտակի պետական քոլեջում այս պահին առկա ներքոհիշյալ առարկաների և մոդուլների գծով թափուր տեղերը.

Տնտեսագիտության հիմունքներ առարկա (0613 2-րդ կուրսում՝ 54 ժամ, 0811 2-րդ կուրսում՝ 48 ժամ),

Խաղողի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիա (0811 2-րդ կուրս, 68 ժամ),  
Մշակաբույսերի սերմերի արտադրության տեխնոլոգիա (0811 2-րդ կուրս, 68 ժամ),

Պտղատու այգիների մշակության և բերքահավաքի տեխնոլոգիա (0811 2-րդ կուրս, 68 ժամ),

Մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաները պաշտպանված գրունտի պայմաններում (0811 2-րդ կուրս, 68 ժամ),

Համակարգչային գրաֆիկա (1041 2-րդ կուրս 90 ժամ),

ԷՀՄ ճարտարապետություն (1041 2-րդ կուրս 54 ժամ),

Միկրոպրոցեսորներ (0613 2-րդ կուրս, 36 ժամ):

Թափուր տեղերը լրացնող դասախոսների մասնագիտական որակավորումը պետք է համապատասխանի պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին:

Հարգանքներով՝

Քոլեջի տնօրեն

